ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«—» ———— 2024թ. **N -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՈՒՇ ԳԻՆՈՍՅԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Վաղաժամկետ դադարեցնել Անուշ Մարզպետունու Գինոսյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները:

«**ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ՝**

ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ՎԱՀԵ ԵՍԱՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՈՒՇ ԳԻՆՈՍՅԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲ Ընկերության կողմից 05.09.2024թ. ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Երևան քաղաքի ավագանու անդամ Անուշ Գինոսյանը բացակայել է 2024 թվականի փետրվար-հունիս ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած Երևանի ավագանու նիստերի քվեարկությունների կեսից ավելիից՝ բացակայելով տեղի ունեցած 29 քվեարկություններից 16-ից: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընդացքում բացակայել է քվեարկությունների ավելի քան կեսից:

Հիմք ընդունելով օրենքի այս հոդվածը առաջարկում ենք վաղաժամկետ դադարեցնել Երևան քաղաքի ավագանու անդամ Անուշ Մարզպետունու Գինոսյանի լիազորությունները:

«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ՝

ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ՎԱՀԵ ԵՍԱՅԱՆ